ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N3 10.02.2012թ

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> և <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքներով և ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ.օգոստոսի 18-ի <<Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին>> թիվ 1180-Ն որոշման.

Որոշում եմ

1. Արարատի մարզի Քաղցրաշեն համայնքում ստեղծել բնակչության տարահանման հանձնաժողով՝ հետևյալ կազմով

Տարահանման հանձնաժողովի նախագահ՝
Արամ Խաչատրյան

Տարահանման հանձնաժողովի անդամներ՝
1. Վահրամ Արարատյան
2. Մելսիկ Գյուլամիրյան
3. Արտակ Եղիազարյան
4. Հարություն Խաչատրյան
5. Սամվել Մարգարյան
6. Գարիկ Փալիկյան

2. Տարահանման հավաքակայանը համարել համայնքի դպրոցի շենքը իր տարածքով:

Համայնքի ղեկավար՝ Վ. Գյուլամիրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N4 10.02.2012թ

ՈՐՈՇՈՒՄ

Քաղաքացիական պաշտպանության
շտաբ ստեղծելու մասին

Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման նպատակով

Որոշում եմ՝

1.Քաղցրաշեն համայնքում ստեղծել քաղաքացիական պաշտպանության շտաբ հետևյալ կազմով՝

ՔՊ շտաբի պետ՝

1.Արամ Խաչատրյան (համայնքի ղեկավարի տեղակալ)

2.Վահրամ Արարատյան (համայնքի ղեկավարի աշխ. քարտուղար)

3.Մելսիկ Գյուլամիրյան (համայնքի ղեկավարի աշխ. գլխ.մասնագետ)

4.Արտակ Եղիազարյան (համայնքի ղեկավարի աշխ. գլխ.մասնագետ)

5.Աղվան Փալիկյան (համայնքի ավագանու անդամ)

6. Գալուստ Գալստյան (համայնքի ավագանու անդամ)

Համայնքի ղեկավար Վ. Գյուլամիրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N 5 10.02.2012

ՈՐՈՇՈՒՄ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10 նոյեմբերի 2011թ թիվ 1582-Ն որոշման 3-րդ կետով

Որոշում եմ՝

1.Ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով Քաղցրաշեն համայնքում ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արամ Խաչատրյանի վրա:

Համայնքի ղեկավար՝ Վ. Գյուլամիրյան

ՀԱՎԵԼՎԱԾ N1

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

10.02.2012թ N5 ՈՐՈՇՄԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավար՝ Վ. Գյուլամիրյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ համայնքի ղեկավարի տեղակալ, ՔՊ հարցերի պատասխանատու՝ Արամ Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

1.Աշխատակազմի քարտուղար՝ Վահրամ Արարատյան

2. Գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի պատասխանատու, համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխ. մասնագետ՝ Արտակ Եղիազարյան

3. Քաղաքաշինության հարցերի պատասխանատու, համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Անահիտ Նավասարդյան

4.Ֆինանսական հարցերի պատասխանատու համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխ. մասնագետ՝ Մելսիկ Գյուլամիրյան

5. Բժշկասանիտարական ուղղությամբ պատասխանատու՝ <Քաղցրաշենի ԱԱՊԿ> ՓԲԸ-ի տնօրեն, բժիշկ՝ Լևոն Միսակյան

Համայնքի ղեկավար՝ Վ. Գյուլամիրյան

ՀԱՎԵԼՎԱԾ N2

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

10.02.2012թ N5 ՈՐՈՇՄԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայքնային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հանդիսանում է Քաղցրաշեն համայնքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման ոլորտում (այսուհետ՝ ոլորտ) համակարգող խորհրդակցական մարմին:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

3. Հանձնաժողովին կից՝ հանձնաժողովի անդամների կողմից լիազորված ներկայացուցիչների ընդգրկմամբ կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր:

II.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման բնագավառում պետական քաղաքականության իրականացման համար առաջարկությունների մշակումը.

2) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման միջոցառումները համակարգված ու օպերատիվ ապահովելու նպատակով առաջարկությունների ներկայացումը,

3) արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած վնասների հոխհատուցման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

6. Հանձնաժողովի նիստերը հիմնահարցերի վերաբերյալ անցկացվում են տարեկան մեկ, իսկ ընթացիկ հարցերի վերաբերյալ՝ ըստ դրանց առաջացման անհրաժեշտության:

7. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:

8. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում և նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը:

9. Հանձնաժողովն իր նիստերի ընթացքում ընդունում է որոշումներ:

10. Հանձնաժողովի որոշումները հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:

11. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներով:

12. Հանձնաժողովի որոշման վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք, որը կցվում է նիստի արձանագրությանը:

13. Հանձնաժողովի անդամներից մեկը կարող է հանձնաժողովի նախագահի կողմից նշանակվել հանձնաժողովի նախագահի տեղակալ և՝ վերջինիս բացակայության ժամանակ փոխարինել նրան:

14. Հանձնաժողովն ունի քարտուղար, որը չի հանդիսանում հանձնաժողովի անդամ: Հանձնաժողովի քարտուղարն արձանագրում է հանձնաժողովի նիստերը և նախապատրաստում է հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

15. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը: Իր բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահի լիազորությունների իրականացումը հանձնարարում է խորհրդի անդամներից որևէ մեկին.

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

3) հանձնաժողովին է ներկայացնում հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը.

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

16. Հանձնաժողովի անդամները՝

1) *իրավունք ունեն՝*

ա. հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու հարցեր,

բ. ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առաջարկություններ,

գ. ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.

2) պարտավոր են՝

ա. մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին,

բ. կատարել հանձնաժողովի որոշումները և նախագահի հանձնարարականները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

17. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.

2) կազմակերպում է հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում միջոցառումների իրականացումը, հանձնաժողովի նիստերի գումարման նախապատրաստական աշխատանքները.

3) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրության կազմումը.

4) ապահովում է հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.

5) սահմանում է հսկողություն հանձնաժողովի որոշումների իրականացման նկատմամբ.

6) հանձնաժողովի նախագահին է ներկայացնում հաշվետվություն իրականացված աշխատանքների մասին.

7) կազմակերպում է արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովներից ստացվող նյութերի հավաքումը, մշակումը և ներկայացումը հանձնաժողովի քննարկմանը.

8) առաջարկություններ է ներկայացնում, ըստ ուղղությունների, աշխատանքային խմբերի ստեղծման վերաբերյալ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման ոլորտում ի հայտ եկած հրատապ խնդիրների լուծման, ինչպես նաև հիմնական խնդիրների իրականացման համար: Աշխատանքային խմբերի կազմը հաստատում է հանձնաժողովի նիստը կամ հանձնաժողովի նախագահը՝ հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակամիջոցում.

9)հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ իրականացնում է այլ լիազորություններ:

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

18 Հանձնաժողովի գործունեությունը դադարում է համայնքի ղեկավարի որոշմամբ:

Համայնքի ղեկավար՝ Վ. Գյուլամիրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N6 10.02.2012թ.

ՈՐՈՇՈՒՄ

Հասցե տրամադրելու մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով.

Որոշում եմ՝

Քաղցրաշեն համայնքում գտնվող 0.10հա տնամերձ հողամասին (ծածկագիր 03-097-055-007) տրամադրել հասցե՝ Սունդուկյան 5:

Համայնքի ղեկավար՝ Վ. Գյուլամիրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N7

13.02.2012թ.

ՈՐՈՇՈՒՄ

Ինքնակամ կառույցը օրինական ճանաչելու մասին

Ղեկավարվելով «ՀՀ ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.05.2006թ N912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույց կատարած անձի՝ Ավետիք Հովհաննիսյանի դիմումը

Որոշում եմ՝

1.Համայնքի վարչական տարածքում պետական սեփականություն հանդիսացող 1233քմ հողամասի վրա քաղաքացի Ավետիք Հովհաննիսյանի կողմից կառուցած գյուղատնտեսական արտադրական օբյեկտը՝ գոմ,անասնապահների սենյակը, սան հանգույցը ճանաչել օրինական:

2.Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

3. Ինքնակամ կառույցը կառուցվել է քաղաքացիական նորմերին և կանոններին համապատասխան:

4. Ինքնակամ կառույցի պահպանումը չի հակասում համայնքի հողաշինարարական և քաղաքացիական ծրագրային փաստաթղթերի պահանջներին:

5. Առաջարկել ինքնակամ կառույցը կատարած անձին՝ քաղաքացի Ավետիք Հովհաննիսյանին 15 աշխատանքային օրվա ընթացքում ինքնակամ կառույցի օրինականացման համար համայնքի բյուջե վճարել օրենքով սահմանված վճարը՝ ինքնակամ շինության համար՝ 875820դրամ, (ութ հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր քսան), հողամասի ուղղակի վաճառքի համար՝ 998730 դրամ(ինը հարյուր ինսունութ հազար յոթ հարյուր երեսուն), ընդամենը՝ 1874550 դրամ (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր հիսուն):

Համայնքի ղեկավար՝ Վ. Գյուլամիրյան